# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 66-Ա 06 փետրվարի 2024 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 18-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 18-րդ օլիմպիադայի անցկացման կանոնակարգը

***որոշում եմ՝***

1. Հաստատել

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շրջանում Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատ 18-րդ օլիմպիադայի համայնքային ու մարզային փուլերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շրջանում Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 18-րդ օլիմպիադայի համայնքային փուլի անցկացման կազմակերպիչների անվանացանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շրջանում Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 18-րդ օլիմպիադայի համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Կազմկոմիտեին՝ ապահովել դպրոցականների ակտիվ մասնակցությունը դպրոցականների շախմատի 18-րդ օլիմպիադայի համայնքային փուլի մրցումներին:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շրջանում Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 18-րդ օլիմպիադայի համայնքային և մարզային փուլերի անցկացման օրերին համապատասխան հաստատություններում ապահովել բժշկի ներկայությունը:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման և Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 18-րդ օլիմպիադայի կանոնակարգի առաքումը հանրակրթական դպրոցներ:

06.02.2024

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ

**Կ. ՍԱՐԳՍՅԱՆ**
**Ք. Գավառ**

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024թ. փետրվարի 6 -ի
N 66-Ա որոշման

# ԿԱԶՄ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 18-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Զազյան Կարեն - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Վարդանյան Լուսինե - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Չարվադարյան Գեղամ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /մարզային փուլի պատասխանատու/

Սաֆարյան Համբարձում - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Հայրապետյան Մերուժան - Հայաստանի շախմատի ակադեմիայի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի լիազոր ներկայացուցիչ /համաձայնությամբ/

Արզաքանցյան Արև - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մասնագետ

Գասպարյան Ալիտա - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Պ. Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոցի տնօրեն

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024թ. փետրվարի 6 -ի
N 66-Ա որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 18-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ

### ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔ

Դադոյան Վ. - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/
Գասպարյան Ա.- Գավառ քաղաքի Պ.Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոցի տնօրեն
Սարգսյան Կ. - Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ/
Թորոյան Գ. .- Հայաստանի շախմատի ակադեմիայի Սարուխանի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ/

### ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔ

Լալազարյան Գ. - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/
Հովհաննիսյան Լ. - Սևանի Վ.Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոցի տնօրեն
Վարդանյան Ա. - Հայաստանի շախմատի ակադեմիայի Սևանի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ/

### ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔ

Սաֆարյան Հ. - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/
Մկրտչյան Ա.- Ճամբարակի ավագ դպրոցի տնօրեն /համաձայնությամբ/
Մարտիրոսյան Գ.- Հայաստանի շախմատի ակադեմիայի Ճամբարակի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ/

### ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾՔ

Գևորգյան Գ. - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/
Պետրոսյան Ա.– Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոցի տնօրեն
Արզումանյան Ս. - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիկի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ/
Հայրապետյան Ա.- Հայաստանի շախմատի ակադեմիայի Մարտունու մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ/

### ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾՔ

Աֆրիկյան Ա.- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/
Խլոյան Ս. - Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան N 2 հիմնական դպրոցի տնօրեն
Պետրոսյան Մ.- Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիսի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ/

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024թ. փետրվարի 6 -ի
N 66-Ա որոշման

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 18-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

| Հ/Հ | Համայնքի անվանումը | Համայնքային փուլի անցկացման վայրը և ժամանակը | Մարզային փուլի անցկացման վայրը և ժամանակը | Համայնքային փուլի գլխավոր մրցավարների անուն, ազգանուն |
|---|---|---|---|---|
| 1 | Գավառ | Գավառ քաղաքի Պ.Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոց, 2024թ. մայիսի 10-ին | Գավառ քաղաքի Պ.Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոց :<br><br>Մարզային փուլի մրցումները կանցկացվեն ՀՀ շախմատի ակադեմիայի կողմից սահմանված ժամկետում | Կարո Սարգսյան |
| 2 | Մարտունի | Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N1 հիմնական դպրոց, 2024թ. մայիսի 8-ին | | Արամայիս Հայրապետյան |
| 3 | Վարդենիս | Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան N 2 հիմնական դպրոց, 2024թ. մայիսի 7-ին | | Մարգարիտ Պետրոսյան |
| 4 | Սևան | Սևանի Վ.Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոց, 2024թ. ապրիլի 30-ին | | Աշոտ Վարդանյան |
| 5 | Ճամբարակ | Ճամբարակի ավագ դպրոց, 2024թ. ապրիլի 27-ին | | Գարիկ Մարտիրոսյան |

Ծանոթություն - ա/ մարզային փուլի գլխավոր մրցավար՝ Մերուժան Հայրապետյան,
քարտուղար՝ Կարո Սարգսյան
բ/ մրցումների սկիզբը ժամը՝ 11.00-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ 08428824

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հաստատում եմ

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի

նախագահի առաջին տեղակալ

Ս.Լպուտյան

« 02 » « փետրվարի » 2024թ.

# Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 18-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ I-IV ՓՈՒԼԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

2024թ.

1. **Դպրոցականների շախմատի օլիմպիադայի նպատակներն ու խնդիրներն են.**

1) նպաստել ՀՀ դպրոցականների շրջանում շախմատ մարզաձևի զարգացմանը, լայն թափ հաղորդել նրա մասսայականացմանը,

2) շախմատ մարզաձևը նպատակաուղղել սովորողների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակմանը,

3) նպաստել դպրոցականների ունակությունների և հմտությունների զարգացմանը, նպատակաուղվածության դաստիարակմանը,

2. **Շախմատի օլիմպիադայի ղեկավարումը.**

Շախմատի օլիմպիադայի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ Հայաստանի շախմատի ակադեմիայի, տարածքային կառավարման մարմինների կրթական ստորաբաժանումների աջակցությամբ:

Շախմատի օլիմպիադայի հովանավորն է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ):

3. **Շախմատի օլիմպիադայի մասնակիցները, փուլերը և անցկացման ժամկետները.**

1) Շախմատի օլիմպիադայի մրցաշարերին կարող են մասնակցել մինչև 14 տարեկան դպրոցականները (2010թ. և բարձր):

2) Շախմատի օլիմպիադան անցկացվում է թիմային հաշվարկով (թիմը բաղկացած պետք է լինի 4 աշակերտից, որոնցից առնվազն 1-ը՝ աղջիկ):

3) Շախմատի օլիմպիադան անցկացվում է չորս փուլերով:

**I փուլ - ներդպրոցական մրցումներ:**

Այս փուլի նախապատրաստման և անցկացման պատասխանատվությունը դրվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների վրա:

Հայաստանի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցները կազմակերպում և անցկացնում են ներդպրոցական մրցումներ մինչև 14 տարեկան դպրոցականների միջև՝ դպրոցի հավաքական թիմ (թիմը բաղկացած պետք է լինի 4 աշակերտից, որոնցից առնվազն 1-ը՝ աղջիկ) ընտրելու նպատակով, որը և կմասնակցի հաջորդ՝ համայնքային (տարածաշրջանային) II փուլին:

Ժամկետը՝ 2024թ. փետրվարի 5-ից մինչև փետրվարի 25-ը:

***II փուլին մասնակցելու հայտին կից բոլոր դպրոցները պետք է ներկայացնեն մրցաշարի անցկացման աղյուսակը:***

II – IV փուլերն անցկացնում է Հայաստանի շախմատի ակադեմիան

**II փուլ - համայնքային (տարածաշրջանային) մրցումներ:**

Մասնակցում են նախորդ փուլում իրավունք նվաճած դպրոցների հավաքական թիմերը: Անցկացվում է մեկ ընդհանուր թիմային մրցաշար: Յուրաքանչյուր համայնքի (տարածաշրջանի) հաղթող թիմը դուրս է գալիս III՝ մարզային փուլ:

Ժամկետը՝ 2024թ. ապրիլի 25-ից մինչև մայիսի 10-ը

Երևանի վարչական շրջանների մրցումները կանցկացվեն 2024թ. մարտի 4-ից 14-ը:

**III փուլ - մարզային մրցումներ:**

Մասնակցում են II փուլի հաղթող թիմերը: Այս փուլից եզրափակիչ են դուրս գալիս Երևանից՝ 3, իսկ մարզերից ՝ 1- ական թիմ:

Ժամկետը՝ 2024թ. մայիսի 20-ից մինչև մայիսի 30-ը:

**IV փուլ - եզրափակիչ:**

Մասնակցում են III փուլի հաղթող թիմերը:

Ժամկետը՝ 2024թ. հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 5-ը:

**4. Շախմատի օլիմպիադայի փուլերի անցկացման կանոնները.**

1) Մրցաշարի II-IV փուլերն անցկացվում են ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոններով: Խաղացողին տրվում է 10 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

2) II փուլում կանցկացվի թիմային մրցաշար՝ շվեյցարական մրցակարգով:

Մրցանակային տեղերը կորոշվեն ըստ.

ա) թիմային միավորների հանրագումարի (հաղթանակը գնահատվում է՝ 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր).

բ) թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարի.

գ) թիմերի անհատական հանդիպման արդյունքի.

դ) եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր, խաղացողին տրվում է 5-ական րոպե):

Թիմերի քիչ քանակի դեպքում հնարավոր է.

ա) մրցաշարն անցակացնել 7 կամ 5 խաղափուլով,

բ) անցկացնել թիմային մրցաշար՝ շրջանային մրցակարգով:

3) III փուլում, ինչպես նաև IV՝ եզրափակիչ փուլում կանցկացվի թիմային մրցաշար՝ շրջանային մրցակարգով:

Մրցանակային տեղերը կորոշվեն ըստ.

ա) թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարի.

բ) թիմային միավորների հանրագումարի (հաղթանակը գնահատվում է՝ 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր).

գ) թիմերի անհատական հանդիպման արդյունքի.

դ) եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր, խաղացողին տրվում է 5-ական րոպե):

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. I-III փուլերի մասնակիցները իրավունք ունեն մասնակցելու եզրափակիչ փուլին, նույնիսկ եթե տեղափոխվել են այլ դպրոց:**